ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«26» մարտի 2019 թվականի N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 699-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի «Նախարարության ենթակա մարմինների ենթակայությունը սահմանելու մասին» թիվ 580-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը և ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հավելվածի 8-րդ կետով, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերով, 10-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ, 11-րդ և 12-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե)՝ վերապահել՝

ա) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման ոլորտներում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքների ապահովումը,

բ) ջրային ոլորտում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպություններում պետական բաժնեմասի նախարարությանը փոխանցված կառավարման հետ կապված գործառույթների՝ ներառյալ պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի արդյունավետ կառավարման պայմանագրերի կնքման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողության ապահովումը,

գ) ոլորտում իրականացվող կամ իրականացվելիք ներդրումային ծրագրերի հետ կապված առաջարկությունների ներկայացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների ապահովումը,

դ) ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև այլ ջրային համակարգերում կորուստների նորմատիվների մշակման աշխատանքներին մասնակցության ապահովումը,

ե) կարգավորվող սակագների, ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների և դրանցում ներառվող պայմանների վերաբերյալ՝ կարգավորող հանձնաժողով առաջարկությունների ներկայացման աշխատանքների իրականացման ապահովումը:

2. Հրամանի 1-ին կետի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի նախագահին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

3/26/2019

X

VERIFIED OCSP 26-Mar-19 16:48:41 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118